ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 23-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետին այցելեցին մի խումբ սփյուռքահայ ուսուցիչներ, թվով 41 հոգի:

Ուսուցիչների խումբը, ժամանած շուրջ 16 երկրներից, Հայաստան էր եկել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով: Երևանում, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի նախաձեռնությամբ, խմբի անդամների համար կազմակերպվեցին մի շարք դասախոսություններ, նաև այցելություններ դեպի Սովետական Հայաստանի տարածքում գտնվող նշանավոր վանքերն ու պատմական հուշարձանները:

Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարիգալստյան խոսքից հետո, խմբի ղեկավար, Հալեպի Կիլիկյան ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Հակոբ Աղայանը Նորին Սրբությանը ներկայացրեց խմբի անդամներին և ապա խմբի անունից արտահայտեց իր որդիական զգացումները:

Այնուհետև խմբի անդամների և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ մտերմիկ զրույց՝ ջերմ մթնոլորտում: Վերջում, Իր խոսքն ուղղելով այցելու մանկավարժներին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Սփյուռքի հայկական համայնքներում շատ ազգային գործեր են կատարվում, բայց հայ ուսուցչի աշխատանքը ամենակարևորն ու ամենանվիրականն է, որովհետև նա է, որ հայ մանուկների մեջ պետք է սերմանի հայեցի ոգի ու մայրենի լեզվի սերը:

Սփյուռքահայ ուսուցիչները խոր գոհունակությամբ հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին՝ ընդունելով Նրա օրհնությունն ու ջերմ մաղթանքները: